«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ N 3
1 նոյեմբերի 2019 թվականի

2019-2020 ուսումնական տարվա ընդունելության
արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2019-2020 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 1176 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ (այդ թվում 9-ը՝ ԲՀ), 1116-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 1176 տեղերին դիմել է 921 դիմորդ, որոնցից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 688-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով): Առկա ուսուցման բակալավրիատում ընդունվածների թիվը +/-1% ճշգրտությամբ համապատասխանել է ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ կանխատեսված առավել վատատեսական սցենարին:

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 435 տեղ, որից 95-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ (այդ թվում 5-ը՝ ԲՀ), 340-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 435 տեղերին դիմել է 456 դիմորդ, որոնցից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 434-ը, իսկ ուսման վարձը վճարելուց հետո հրամանագրվել է ընդամենը 329 ուսանող: Մագիստրատուրա ընդունված ուսանողների 43.2%-ը սովորել են բակալավրիատի միևնույն մասնագիտությամբ, 38.6%-ը ՀՊՏՀ այլ բակալավրական կրթական ծրագրերի շրջանավարտներ են, իսկ 18.2%-ը՝ այլ բուհերի շրջանավարտներ: Բակալավրիատից մագիստրատուրա անցումը կազմել է 27% (նախորդ ժամանակահատվածից շուրջ 3%-ով պակաս):

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 290 տեղ: Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 179 դիմորդ. ընդունվել են 173-ը: Հրամանագրված ուսանողների թիվը դեռևս հստակ չէ՝ կապված ուսման վարձի վճարման ժամկետի հետ:

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 770 տեղ (այդ թվում 77 տեղ՝ նախատեսված ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների համար): Հեռակա ուսուցման բակալավրիատ է դիմել 216 դիմորդ. ընդունվել են 170-ը: Հրամանագրված ուսանողների թիվը դեռևս հստակ չէ՝ կապված ուսման վարձի վճարման ժամկետի հետ:

Հեռակա ուսուցման բակալավրիատի երկրորդ կուրս ՆՄՄԿ հաստատություններից դիմել է 351 դիմորդ (հատկացվել է 70 տեղ): Համալսարանի վերադաս մարմնին ուղղված դիմումի համաձայն հնարավորություն է ընձեռնվել բոլոր կարմիր դիպլոմ ունեցող ուսանողներին (186 տեղ) տալ երկրորդ կուրսում հրամանագրման նպատակով առարկայական տարբերությունների հանձնման թույլտվություն: Արդյունքում հեռակա ուսուցման բակալավրիատի երկրորդ կուրս ընդունվել են ՆՄՄԿ հաստատությունների 186 շրջանավարտներ: Հրամանագրված ուսանողների թիվը դեռևս հստակ չէ՝ կապված ուսման վարձի վճարման ժամկետի հետ:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2019-2020 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնին, համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող ամբիոններին՝ մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել կոնկրետ մագիստրոսական կրթական ծրագրերից ուսանողների հրաժարվելու (չդիմելու) պատճառները և առաջարկներ ներկայացնել կա՛մ դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու, կա՛մ փակելու վերաբերյալ:
3. Հանձնարարել աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժիններին՝ մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել դիմորդների ՀՊՏՀ դիմելու (մասնագիտական կողմնորոշման) դրդապատճառները: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի և կրթական ծրագրեր իրականացնող ամբիոնների հետ համատեղ մշակել ապագա դիմորդների

իրազեկման ընդլայնման և մասնագիտական կողմնորոշման խթանման միջոցառումների ծրագիր, լրամշակել համալսարանի կայքի միջոցով դիմորդներին տրվող տեղեկատվությունը և կատարելագործել դրա տարածման ձևերը:

4. Հանձնարարել ամբիոններին՝ վերանայել մագիստրոսական կրթական ծրագրերը, հնարավորության պարագայում կրճատել դրանց կրեդիտային բեռնվածությունը և տևողությունը՝ մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը:
5. Հանձնարարել ամբիոններին և ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնին՝ մշակել համատեղ կամ կրկնակի աստիճանաշնորհում ենթադրող կրթական ծրագրեր՝ արտաքին գործընկերների որոնման աշխատանքներում ներգրավելով արտաքին կապերի դեպարտամենտին:
6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. նոյեմբերի 1
Երևան